



*Բույսերի աճելավայրերի կորուստ և
տարաբնակեցում*




Նախաբան

Մեր մարդանման նախնիներն ի հայտ են եկել մոտ 2 մլն. տարի առաջ, իսկ ժամանակակից մարդը՝ 40 հազար տարի առաջ: Մարդը կենսասոցիալ տեսակ է և կարիք ունի ապրելու հարմարավետ պայմաններում, ինչի համար նա հարմարվում է շրջակա միջավայրին, կամ միջավայրն է հարմարեցնում իրեն:

Վերջին տարիների ազգաբնակչության արագ աճը հանգեցրեց շրջակա միջավայրի վրա ճնշման բարձրացմանը: Վերջին 150 տարիների ընթացքում Երկրի բնակչությունը 1 միլիարդից հասել է 6 միլիարդի: Մարդու տնտեսական գործունեությունը բերել է տեսակների և ապրելավայրերի ուղղակի ոչնչացմանը: Բնակչությունն օգտագործում է մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ: Այդ ռեսուրսները հատկապես անարդյունավետ օգտագործում են աղքատ երկրները:

Կենսաբազմազանությանը մեծ վնաս է հասցնում բնական էկոհամակարգերի քայքայումը: Տիեզերական նկարների տվյալներով ցամաքում պահպանվել են 30%-ից քիչ էկոհամակարգեր: Առավել վնասված է Եվրոպան, այնտեղ պահպանվել է 5,7%-ը, Հյուսիսային Ամերիկայում՝ 34,0%-ը (առավելը լեռնային մասերում), Ասիայում՝ 22,9%-ը, Աֆրիկայում՝ 27,0%-ը, Հարավային Ամերիկայում՝ 20,9%-ը, Ավստրալիայում՝ 27,1%-ը:

Կենտրոնական Ասիա: Օգոստոս 2000թ.



Կենտրոնական Ասիա: Օգոստոս 2014թ.



ԱՃելավայրերի կորուստների հիմնական պատճառները

Բացի ապրելավայրերի լրիվ ոչնչացումից, կենսաբազմազանության վրա ազդում են նաև ապրելավայրերի մասնատումը: Մասնատման գործոններն են՝ ճանապարհները, էլեկտրալարերը, արհեստական ջրանցքները, գյուղատնտեսական տարածքները, քաղաքները, հանքարդյունաբերությունը:

Կենսաբազմազանության աղքատացման գլխավոր պատճառներից է պոպուլյացիաների անչափ օգտագործումը: Օրինակ՝ այսօր, չնայած որ կենի հատապտղայինը գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում, այն անխնա քաղվում է և օգտագործվում ծաղկեփնջեր պատրաստելիս: Որոշ դեղաբույսեր հայտնվել են Կարմիր Գրքում, ինչն անխնա քաղելու հետևանք է:



Կենսաբազմազանության պահպանման մակարդակները

Իրականացվում է 2 մակարդակով.

 պահպանման տեսակապոպուլյացիային մակարդակ (տվյալ մակարդակում բացահայտվում են անհետացման վտանգի տակ գտնվող տեսակները և էկոհամակարգի օգտագործման ժամանակ այդ տեսակների վրա դրվում է օգտագործման արգելք),

 պահպանման էկոհամակարգային մակարդակ (պահպանվում են ամբողջ էկոհամակարգեր, ստեղծվում են հատուկ պահպանվող տարածքներ):

Պահպանման տեսակապայույթային մակարդակ

Պայույթացիները կարող են պահպանվել բնական ապրելավայրում կամ կոնսերվատիվ մեթոդներով՝ սերմերի, հյուսվածքների պահպանում և այլն:

Առավել տարածված է պահպանման համար տեսակների օգտագործման սահմանափակումը կամ արգելքը: Տեսակի պահպանումը կախված է նաև բնակչության վերաբերմունքից, իրազեկությունից: Կենսաբազմազանության պահպանման գործում կարևոր դեր ունի նաև Կարմիր Գիրքը:



Բնապահպանության Միջազգային Միությունը Կարմիր Գրքերի համար ընդունել է 5 կատեգորիաներ.

0 (EX, ըստ երևույթին անհետացած տեսակներ), տեսակներ, որոնք մի շարք տարիների ընթացքում բնության մեջ չեն հանդիպել, բայց կարող են հանդիպել անհասանելի տեղերում,

I (E, գտնվում են անհետացման վտանգի տակ), տեսակներ, որոնք ենթարկվում են անհետացման վտանգին, նրանց հետագա գոյատևումն առանց պահպանման հնարավոր չէ,

II (V, խոցելի տեսակներ), տեսակներ, որոնց մոտ ապագայում սպառնում է վտանգ, եթե նրանց թվաքանակը կրճատող գործոնները կշարունակեն գործել,

III (R, հազվադեպ տեսակներ), տեսակներ, որոնք ներկայացված են փոքր պոպուլյացիաներով, ներկայումս նրանց չի սպառնում անհետացման վտանգ, բայց կա ռիսկ, որ կանհետանան,

IV (I, անորոշ ստատուսով տեսակներ), տեսակներ, որոնք հավանաբար վերագրվում են վերը նշված որևէ կատեգորիայի, բայց նրանց մասին բավարար տեղեկություններ չկա,

V (վերականգնվող տեսակներ), տեսակներ, որոնք կամ բնական ազդեցության տակ, կամ պահպանման արդյունքում սկսել են վերականգնվել, և շտապ պահպանման կարիք չունեն:

Տեսակի վտանգվածության աստիճանն որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.



տեսակի ներկայացուցիչների քանակի փոփոխություն,

արեալի չափսեր,



տեսակի ներկայացուցիչների ընդհանուր քանակ, որոնք կարող են տալ սերունդ,

թվաքանակի նվազման կանխատեսումներ,



որոշակի տարիների ընթացքում անհետացման հավանականություն:

Ինտրոդուկցիայի և ռեինտրոդուկցիայի դերը

Եթե առանձին տեսակների պահպանումն որոշ դեպքերում արդյունավետ չէ, ապա օգտագործում են պահպանման հատուկ ձևեր՝ բազմացումը մարդու հսկողության ներքո, հազվադեպ տեսակների ինտրոդուկցիա (ներմուծում), ռեինտրոդուկցիա (արտահանված տեսակների վերադարձը հայրենիք): Այս աշխատանքները հաջողությամբ կատարում են բուսաբանական այգիները:

Աշխարհի 1600 բուսաբանական այգիներում աճում են մոտ 80 հազար տեսակի 4 մլն. բույս, և դրանց ցուցակը մշտապես համալրվում է:

Մերմերի բանկ

Պահպանման էֆեկտիվ մեթոդներինց է նաև գենային բանկերի ստեղծումը: Այնտեղ պահում են սերմեր, սառեցրած հյուսվածքներ: Աշխարհում կա սերմերի 50 բանկ, որոնց գործունեությունը ղեկավարում է «Գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային խորհրդատվական խումբը»: Այնտեղ հավաքված



է ավելի քան 2 մլն. նմուշ: Ն. Ի. Վավիլովի ստեղծած բուսաբուծության ինստիտուտում (Կուբան) գետնի տակ, 24 սենյակներում, որտեղ ջերմաստիճանը մշտապես $+4.5^{\circ}\text{C}$ է, պահպանվում են սերմերի 330 հազար նմուշներ:

Սերմերի բանկերում հնարավոր է պահել միայն այն սերմերը, որոնք ունեն հանգստի շրջան: Ջերմաստիճանը պահելով մշտապես $+4.5^{\circ}\text{C}$, երկարացնում է սերմերի հանգստի շրջանը: Արևադարձային բույսերի սերմերը՝ սուրճ, գեվեյա, որոնց սերմերը հանգստի շրջան չունեն և այդ պատճառով հնարավոր չէ դրանք պահպանել, պահվում են սառեցրած հյուսվածքների տեսքով:

Կենսաբազմազանության էկոհամակարգային պահպանման մակարդակը

Այս մակարդակում կենսաբազմազանության պահպանումն ավելի էֆեկտիվ է և պահանջում է ավելի քիչ ծախսեր, քան տեսակի պահպանումը: Դրա համար

ստեղծվում են հատուկ պահպանվող տարածքներ՝ արգելոցներ, արգելավայրեր, ազգային այգիներ (պարկեր):

Արգելոցներում մարդու տնտեսական գործունեությունը լրիվ արգելված է, թույլատրվում է միայն գիտական հետազոտություններ: Բայց որոշ էկոհամակարգեր, օրինակ մարգագետինները, տափաստանները, եթե չօգտագործվեն, ապա աճում են թփերով և ծառերով, իսկ տափաստանային և մարգագետնային տեսակներն անհետանում են:

Ազգային այգիներում հողերը թույլատրվում է օգտագործել տնտեսական նպատակներով, բայց պահպանվող տեսակներն այցելուներից մեկուսացվում են:

Արգելավայրերն ստեղծում են առանձին տեսակները կամ պոպուլյացիաները պահպանելու համար: Մարդու տնտեսական գործունեությունը թույլատրվում է մասնակի, այնքան, որ չվտանգի պահպանման տակ գտնվող տեսակներին:

Սևան Ազգային Պարկ 2017թ.



Կենսաբազմազանության ձևավորման ուղիները

Հայաստանի տարածքի կենսաբազմազանությունն անցել է ձևավորման և զարգացման բարդ ու երկարատև ուղի, որի մասին առաջին հերթին վկայում են բավական հարուստ բրածո նյութերը: Ծառաբույսերի առավել հնագույն բրածո մնացորդները պատկանում են վերին կավձի դարաշրջանին (պտերներ, արաուկարիա, սոճի, էվկալիպտ, սոսի, բարդի ցեղերի բազմաթիվ ներկայացուցիչներ

և այլն): Հարուստ նյութ է հավաքվել նաև միոցենի նստվածքային ապարներից (եղննի, մայրի, ընկուզենի, կաղնի, շագանակենի, կեչի, բոխի, հացենի, լորենի և այլն): Ընդհանուր առմամբ, ըստ հնէաբանական տվյալների, Հայաստանի տարածքում տարբեր երկրաբանական ժամանակների նստվածքային ապարներում հայտնաբերվել են 169 տեսակ բրածո ծառաբույսեր (85 ցեղից և 44 ընտանիքից), որոնցից ներկայիս ֆլորայում պահպանվել են 47-ը:

Ժամանակակից և բրածո ֆլորաների համեմատական վերլուծությունից պարզվում է, որ ներկայիս ֆլորան հիմնականում ձևավորվել է երրորդական ժամանակաշրջանում (միոցեն), երբ սկսվել է ներկա բուսական ծածկույթի, անտառային հիմնական համակեցությունների ձևավորումը:

Պլիոցենում տեղի է ունենում կլիմայի հետագա կոնտինենտալացում, որի հետևանքով ֆլորայի կազմից դուրս են մղվում մերձարևադարձային բույսերը և լայն տարածում ստանում տերևաթափ և ցրտադիմացկուն



տեսակները՝ ընկուզենի հունական, հաճարենի արևելյան, թխկի վրացական և ուրիշներ: Սակայն առանձին օջախներում պահպանվել են նախկին ֆլորայի տեսակներ (սոճի արևելյան, կենի հատապտղային):

Կովկասյան տարածաշրջանում իրար հաջորդող սառցապատումները (ուշ պլիոցենային, պլեյստոցենային) լուրջ փոփոխության ենթարկվցին բուսական տիպերի քանակական հարաբերությունը, կրճատվեցին և աղքատացան ենթաանտառներով անտառները, ընդարձակվեցին ավելի բարեխառն կլիմային բնորոշ անտառային և մի շարք այլ երկրորդական համակեցություններ: Հատկապես այդ ժամանակ ներթափանցեցին հյուսիսային ծագում ունեցող այնպիսի անտառային

տեսակներ, ինչպիսիք են կեչի ելունդավորը, արոսենի սովորականը, թխենի սովորականը և այլն:

Ֆլորայի հետաառցադաշտային էվոլյուցիան ընթացել է քսերոֆիտացման ուղիով: Այդ ընթացքում Առաջավոր Ասիայից ներթափանցում են բուսականության առավել քսերոֆիտ ձևեր:

Բնակլիմայական պայմանների նկարագրված փոփոխությունների արդյունքում ձևավորվել են Հայաստանի ներկայիս լանդշաֆտները, հիմնական՝ էկոհամակարգերը և դրանց հետ մեկտեղ կենսաբազմազանությունը:

Հետագայում հանրապետության տարածքը դառնում է մարդու ակտիվ գործունեության ոլորտ, որի հետևանքով անհետացել են բազմաթիվ արժեքավոր և հետաքրքիր բուսատեսակներ, կրճատվել են հատկապես մեզոֆիլ անտառային զանգվածները, ընդարձակվել լեռնաչորասեր և տափաստանային բուսականության զբաղեցրած տարածքները և արիդային նոսրանտառները՝ նրանց բնորոշ ֆաունայով:

Խոսրովի արգելոց 2016թ.



Հայաստանի բուսական աշխարհը

Հայաստանի Հանրապետությունը, չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, աչքի է ընկնում բուսական համակեցությունների ու բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ, որը տարածքի բարդ ֆիզիկաաշխարհագրական պայմանների և ֆլորոգենետիկական տեսակետից նպաստավոր աշխարհագրական դիրքի արդյունք է, 1 քառ. կմ հաշվում են ավելի քան 100 տեսակ, որն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

Հայաստանի կենսաբազմազանության էնդեմիկ, ռելիկտ, հազվագյուտ և անհետացող տեսակներ

Հայաստանի էնդեմիկ բույսերը

Առաջին անգամ Հայաստանում է նկարագրվել բույսերի 400 տեսակ, որոնցից 185-ը տարբեր ժամանակներում հայտնաբերվել է նաև հարևան երկրներում, իսկ մնացած 115-ը հանդիպում է միայն Հայաստանում: Հայաստանի առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող էնդեմիկներից են Հայաստանի արոսենին, Նաիրյան նշենին, Թախտաջյանի կաթնուկը, Թամամշյանի օշանը, Ուրարտուի ցորենը, Տիգրանի թանթրվենին, Մաղաքյանի ստելերոպսիսը և այլն: Մնացորդային բույսերի մեծ մասը՝ ունաբին, կենին, սոսին, արջատիլենին, խնկենին, գիհին, գայլահատը, մրտավարդը, պարիյակը, սովորական բաղեղը և այլն, ծառեր ու թփեր են: Կան նաև մնացորդային խոտաբույսեր՝ ծովոսպը, սպիտակ և դեղին ջրաշուշանները, ենթալպյան բարձրախոտերը, բոլոր տեսակի պտերները, ոչխարի շյուղախոտը և այլն:

Նկարում՝ Նաիրյան նշենի, Թամամշյանի օշան, Տիգրանի թանթրվենի



Էնդեմիկ, բնաշխարհիկ բույսերն աշխարհագրական որևէ ոչ մեծ տարածքում սահմանափակորեն տարածված բույսերն են: Բաժանվում են երկու խմբի՝ պալեո և նեո-էնդեմիկներ: ՀՀ տարածքում բուսաբան-կարգաբանների կողմից տարբեր ժամանակներում բացահայտվել և նկարագրվել է շուրջ 400 տեսակ, որոնցից 115-ը հանդիպում է միայն Հայաստանում (285-ը հայտնաբերվել է նաև հարևան երկրներում):

ՀՀ-ում տարածված են նաև մշակաբույսերի վայրի էնդեմիկ տեսակները (նախնիները)՝ տանձենի, խնձորենի, կեռասենի, սալորենի, արոսենի, սգնի, ոլոռ, ոսպ, ճակնդեղ և այլն:

Թախտաջյանի կաթնուկ



Արարատի իշամառուլ



Առանձնահատուկ տեղ են գրավում վայրի էնդեմիկ հազագինները (ցորեն, գարի, աշորա և այլն), որոնք օժտված են ներտեսակային խիստ բազմազանությամբ և արժեքավոր հատկանիշներով (երաշտադիմացկունություն, վաղահասություն, պրոտեինի և հում սուրճանյութի պարունակություն և այլն):

Էնդեմիկ բույսերը ՀՀ բուսաշխարհի ամենաարժեքավոր գենոֆոնդն են, ունեն մեծ գիտական և գործնական նշանակություն: Դրանց կարգաբանական բջջաբանական, էկոլոգիական բնութագրումը, աշխարհագրական տարածման և փոշոտման առանձնահատկությունների բացահայտումը մեծ նշանակություն ունեն առանձին ֆլորիստիկ համալիրների ծագման բացատրման ժամանակ, նաև առանձին

կարգաբան, խմբերում տեսակագոյացման երևույթների ճշգրիտ լուսաբանման համար:

Ֆլորան



Հայաստանի ֆլորայի էնդեմիկների թիվը կազմում է 106 տեսակ, որը նրա բուսական աշխարհի տեսակային ընդհանուր բազմազանության մոտ 3%-ն է, իսկ Կովկասի ֆլորայի՝ 1,5%-ը:

Ժամանակակից Հայաստանի վարչական սահմանները չեն համընկնում ֆլորիստիկ սահմանների հետ, այսինքն հանրապետությունը գտնվում է տարբեր բուսաաշխարհագրական մարզերի սահմանագծում (շփման գոտում): Մի կողմից դրանով է բացատրվում նրա ֆլորիստիկ հարստությունը, մյուս կողմից, դրա հետևանքով է պայմանավորված հայաստանյան էնդեմիկ տեսակների համեմատաբար փոքր քանակությունը: Եթե փորձենք հանրապետության վարչական սահմանները խախտելով այն մոտեցնել բնական ֆլորիստիկական սահմաններին և դիտարկենք ավելի մեծ տարածք (տվյալ դեպքում ավելացնելով Նախիջևանի ֆլորիստիկ շրջանը՝ նկատի ունենալով բուսաբանների կողմից ընդունված «Հարավային Անդրկովկաս» բուսաաշխարհագրական տարածաշրջանը), ապա էնդեմիկ տեսակների թիվը կկրկնապատկվի ու կհասնի ավելի քան 200 տեսակի:

Այսպես, այստեղ են աճում շատ փոքր արելա ունեցող տեսակներ, որոնք բացի Հայաստանից, ունեն 1-2 աճման վայրեր հայտնի երկրների մեծական տարածքներում: Օրինակ, բարձր գեղազարդ զանգակ Մասալսկուն Հայաստանի տարածքում աճում է միայն Արտենի լեռան լանջերի և Թուրքիայում (մեկ օջախում), կամ խոզանափուշ հսկայանմանը, որն աճում է Զանգեզուրում և Հյուսիսային Իրանում: Նախիջևանում հանդիպող էնդեմիկներից և հետաքրքրություն ներկայացնող հազվագյուտ բուսատեսակներից կարելի է հիշատակել զանգակածագիկ Զանգեզուրի, ոզնեթուփ Ֆողորովի, շորան Թամամշյանի, հիրիկ Գրոսսեյմի և ուրիշներ: Բայցի այդ առկա են մոտ 300-ական էնդեմիկ տեսակներ հայ-իրանական ենթագավառի, հայկական և ատրպատական գավառների համար:

Էնդեմիկ տեսակի քանակական բաշխվածությունն ըստ ընտանիքների

N	Ընտանիք	Տեսակների քանակը
1.	Աստղածաղկազգիներ Asteraceae	26
2.	Վարդազգիներ Rosaceae	24
3.	Խլածաղկազգիներ Scrophulariaceae	8
4.	Բակլազգիներ Fabaceae	7
5.	Կաղամբազգիներ Brassicaceae	6
6.	Մեխակազգիներ Caryophyllaceae	5
7.	Դաշտավուկազգիներ Poaceae	5
8.	Գաղտրիկազգիներ Boraginaceae	4
9.	Նեխուրազգիներ Apiaceae	3
10.	Կոկոռազգիներ Grossulariaceae	2
11.	Արճախոտազգիներ Limoniaceae	2
12.	Ճրագախոտազգիներ Orobanchaceae	2
13.	Տորոնազգիներ Rubiaceae	2
14.	Զանգակազգիներ Campanulaceae	1
15.	Ցախակեռասազգիներ Captifoliaceae	1
16.	Ակքանազգիներ Dipsacaceae	1
17.	Իշակաթունակազգիներ Euphorbiaceae	1
18.	Խորդազգիներ Geraniaceae	1
19.	Սրոհունդազգիներ Hypericaceae	1
20.	Շուշանազգիներ Liliaceae	1
21.	Կտավատազգիներ Linaceae	1
22.	Փիփերտազգիներ Malvaceae	1
23.	Կաքնախոտազգիներ Polygalaceae	1

Հայաստանի ֆլորայի բազմազանության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում ռելիկտային տեսակները, որոնք անցյալ երկրաբանական դարաշրջաններից պահպանվել են գործնականորեն գրեթե անփոփոխ ձևով: Այդ տեսակների ստույգ քանակությունը որոշել չափազանց դժվար է, քանի որ նույնիսկ առկա նյութերը չեն ապահովում անհրաժեշտ երաշխիք անցած հազարամյակների ընթացքում տեսակների անփոփոխելիության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, ռելիկտների մոտավոր թիվը Հայաստանի ֆլորայում ներկայացված է 150-200 տեսակով:

Ռելիկտների մեջ կան տեսակներ, որոնք իրենց շատ լավ են զգում ժամանակակից էկոլոգիական պայմաններում և մրցակցում են, անհամեմատ ավելի երիտասարդ տեսակների հետ (հաճարենի արևելյան, որը երրորդային ժամանակաշրջանի ռելիկտ է): Ռելիկտների այլ տեսակներ ունեն բավական մեծ տարածում, սակայն հարմարված են որոշակի էկոլոգիական պայմաններին (կենի հատապտղային, մրտավարդ կովկասյան): Եվ վերջապես ռելիկտների երրորդ խումբն ունի չափազանց նեղ տարածվածություն և այդ տեսակները պահպանվել են առանձին ապաստարաններում (ռեֆուգիումներում):

Բուսական աշխարհի պահպանությունը

Վերջին շրջանում արդյունաբերության զարգացման, աննախադեպ շինարարության ծավալման, ինչպես նաև բնական պաշարների ոչ խնայողական օգտագործման հետևանքով ՀՀ բուսաշխարհը մեծ կորուստներ է կրել: Դա չի սահմանափակվում միայն առանձին բուսատեսակներով, այլ զանգվածաբար ոչնչանում են գենոֆոնդի բուսական համակեցություններ, ամբողջական ասոցիացիաներ, ֆորմացիաներ և բուսաբանական խմբավորումներ:

Բնաջնջման եզրին են կանգնած անապատային, կիսաանապատային, տափաստանային և ճահճային բուսականության տիպերը, որոնք ընդգրկում են Հայաստանի ֆլորայի շուրջ 25%-ը: Այս իրավիճակից դուրս գալու ելքը հանրապետության բուսատեսակներով հարուստ, առաջնային բուսական համակեցությունների ամենաբնորոշ նմուշային ոչ խոշոր հատվածները պետական

պահպանության տակ առնելն է: Ստեղծված արգելոցները, արգելավայրերը և ազգային պարկերը (ընդհանուր տարածքը կազմում է 218807 հա) այս առումով ի վիճակի չեն ապահովել գենոֆոնդի վերարտադրությունը: Անհրաժեշտ է անհապաղ կատարել ՀՀ ֆլորայի՝ գենոֆոնդի և գենոֆոնդի նոր, բազմակողմանի փորձաքննություն, որի խնդիրը պետք է լինի գենոֆոնդի պահպանության և վերարտադրության նոր ռազմավարության մշակումը:

Ողկուզապտեր կիսալուսնաձև

Բանպոտ նիզականման

Ադիանտում Վեներայի վարս



Տնտեսական նշանակության տեսակները, օգտագործման բնագավառներն ու վիճակը

Հայաստանի ֆլորայի տնտեսապես օգտակար տեսակները՝ ըստ օգտագործման նշանակության կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

 *Ուսվող բույսեր*, որոնք ներկայացված են ավելի քան 200 տեսակով, օգտագործվում են ինչպես թարմ վիճակում, այնպես էլ վերամշակումից հետո, թթու և եփած կամ չորացված վիճակում: Դրանցից շատերը (բոխի, շրեշը, դանձիլը և ուրիշներ) բնակչության կողմից անխնա օգտագործելու հետևանքով ներկայումս դարձել են հազվագյուտ կամ գտնվում են ոչնչացման վտանգի տակ: Հայաստանում հայտնաբերված մոտ 300 տեսակի ուտելի սնկերից բնակչության կողմից օգտագործվում է մոտ 10 տեսակ:



Կերային բույսերը ի տարբերություն ուսվող տեսակների, ունեն

անհամեմատ մեծ բազմազանություն (մոտ 2 հազար տեսակ)՝ կորնգանը, երեքնուկը, առվույտը, աղվեսագին և այլն:



Անտառային ծառատեսակների փայտանյութի օգտագործումը կատարվում է ինչպես վառելիք, այնպես էլ շինարարության, զանազան մանր գործիքաշինության մեջ և կենցաղային նպատակներով: Հատկապես բարձր է գնահատվում կաղնու, հաճարենու, բոխի բնափայտը:



Դեղաբույսերը նույնպես Հայաստանի ֆլորայի մեջ ունեն մեծ տեսակարար կշիռ (մոտ 10%): Դեղաբույսերից շատերն անհիշելի ժամանակներից ի վեր օգտագործում են ժողովրդական բժշկության մեջ: Առավել մեծ նշանակություն ունեն սզնի (*Crataegus*), դժնիկ (*Rhamnus*), գլխի (*Juniperus*), ծորենի (*Berberis*), մասրենի (*Rosa*), արևքուրիկ (*Hypericum*) և այլ ցեղերի բազմաթիվ ներկայացուցիչներ: Որոշ դեղաբույսեր (սրոհունդը, անթառամը, ուրցը, մատուտակը) հավաքվում են մեծ քանակություններով և այժմ դարձել են հազվագյուտ:



Մեղրատու տեսակները (շուրջ 350 տեսակ): Դրանցից են թխկին (*Acer*), կորնգանը (*Onobrychis*), առվույտը (*Medicago*), լորենին (*Tilia*), երեքնուկը (*Trifolium*) և այլն: Օգտագործվել են հայկական ճանաչված 1000 ծաղկի մեղրի արտադրության մեջ, որն արտահանվում էր Խորհրդային Միության տարածքով մեկ: Մեղրարտադրության կարևոր տարածքներն են Սևանա լճի ավազանը, Թալինի և Մեղրու շրջանները:



Բարձր գեղագարդ տեսակները, դրանք հատկապես ծառերն են, թփերը և բազմաթիվ դեկորատիվ խոտաբույսերը (մոտ 300 տեսակ), դրանք կարելի է հաջողությամբ օգտագործել հանրապետության կանաչապատման պրակտիկայում:



Եթերայուղատու բույսեր (շուրջ 120 տեսակ), հիմնականում պատկանում են ուրցի (*Thymus*), անթառամի (*Helichrysum*), օշինդրի (*Artemisi*) և մի շարք այլ ցեղերին:



Ներկատու բույսերը նույնպես ընդգրկում են մոտ 120 տեսակ: Դրանցից են իշակաթնուկի (*Euphorbia*), դժնիկի (*Rhamnus*), կտտկենու (*Sambucus*), տորոնի (*Rubia*) և մի շարք այլ ցեղերի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հատուկ նշանակություն ունեն նաև վիտամինատու (մոտ 130 տեսակ), դաբաղանյութեր պարունակող (մոտ 60 տեսակ) և խեժատու (60 տեսակ) բուսատեսակներ: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականթային դազարը (*Astragalus*):


Հայաստանում հայտնաբերված մեծ քանակի մշակաբույսերի վայրի ցեղակիցները գենետիկական նյութի առանձնահատուկ աղբյուր են հանդիսանում բուսաբանության համար: Այս պաշարները տնտեսապես մեծ նշանակություն ունեն գենոֆոնդի պահպանության, բույսերի սելեկցիայի, գիտական հետազոտությունների զարգացման առումով:

Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը

Հայաստանի Կարմիր Գիրքը (բույսեր) հրատարակվել է 1989թ., սակայն նրա վերաբերյալ աշխատանքները սկսել էին դեռևս 1957 թվից: Միայն հրատարակման պրոցեսը տևեց 5 տարուց ավելի: Այդ տարիների ընթացքում բազմաթիվ անգամ վերանայվեց տեսակետների կազմը, դրանց ընտրման չափանիշները:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տարածքում աճող վայրի տեսակների ներկա վիճակը տագնապալի է: Ավել կամ պակաս չափով պահպանության կարիք ունեն Հայաստանի ֆլորայի տեսակների համարյա կեսը: Կարմիր գրքում ընդգրկված են միայն 387 տեսակ (ֆլորայի ընդհանուր թվի 12%-ը), որոնց վիճակն առավել տագնապալի է:

Կարմիր գրքում գրանցված 387 բուսատեսակներից են. պտերների՝ 8,



մերկասերմերի՝ 4 և ծածկասերմերի 375 տեսակները ներկայացված են միջազգայնորեն ընդունված 5 կարգավիճակով՝ անհետացած բույսեր՝ 30 տեսակ, անհետացող՝ 138, հազվագյուտ՝ 138, կրճատվող՝ 57 և անորոշ՝ 8:

Կարմիր գրքում մանրամասն տեղեկություններ են տրված արգելոցների, Սևան ազգային պարկի, մշակաբույսերի վայրի ցեղակիցների, բուսական ծածկույթի վերաբերյալ:

ՀՀ տարածքի բույսերի որոշ տեսակներ (հայկական արոսենի, արարատյան և ուրարտական ցորեններ, Վավիլովի տարեկան) գրանցվել են նաև Բնության պահպանության միջազգային Կարմիր գրքում:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի

Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման
աջակցությամբ (UNEP):